«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Գիտության Զարգացման Հիմնադրամ» -ի Հոգաբարձուների Խորհրդին

Մեր կողմից իրականացվել է ՀՀ ԳԱԱ «Գիտության Զարգացման Հիմնադրամ»-ի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել ու անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ կիրառվող ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Աուդիտի ղեկավար՝
Գ. Մովսիսյան

Տնօրեն՝
Տ. Զորյան

«ԼՈՆԴՈՆ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ»
"LONDON BUSINESS GROUP"
01223655
N16

4 մարտի, 2016 թ.